


ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՈՉ ՄԷԿ ՏԱՐԱԿԱՌԾՈՒԹԻՒՆ ԳԵՄ ՈՒՉԵՐ ԼՍԵԼ

Posted on March 10, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Պարոյր Աղպաշեան, ՌԱԿ Մամուլ, Պէյրուզ, 9 Մարտ 2010



Մտաւորականութեան ու գործնականութեան մարմնացում, իր ելութեամբ եւ ոգեղնիութեամբ` հրաշալի ղեկավար մը, որ ՌԱԿ-էն, ԹՄՄ-էն ու ՀԲԸՄ-էն ներս նուաճեց բարձրունքներ, առանց որեւէ ‘միջնորդութեան’, առանց որեւէ ‘ցուցադրութեան’: Հայկազէն Ուզունեան կը կոչուէր այս բացառիկ անձնաւորութիւնը, որ ‘որբի եւ ողբ’ի հոգեբանութենէն դուրս եկաւ յաղթական, բացառիկ վերընծիւղումով, իր տնտեսավարական ու գործարարութեան մարզերէն ներս հասնելով նախանձելի դիրքերու, այդ բոլորը ծառայեցնելով իր ժողովուրդին, հայրենիքին, մշակոյթին, անսահման նուիրաբերումներով ու պատրաստակամութիւններով:

Պարոյր Աղպաշեան, ՌԱԿ Մամուլ, Պէյրուզ, 9 Մարտ 2010



Մտաւորականութեան ու գործնականութեան մարմնացում, իր ելութեամբ եւ ոգեղնիութեամբ` հրաշալի ղեկավար մը, որ ՌԱԿ-էն, ԹՄՄ-էն ու ՀԲԸՄ-էն ներս նուաճեց բարձրունքներ, առանց որեւէ ‘միջնորդութեան’, առանց որեւէ ‘ցուցադրութեան’: Հայկազէն Ուզունեան կը կոչուէր այս բացառիկ անձնաւորութիւնը, որ ‘որբի եւ ողբ’ի հոգեբանութենէն դուրս եկաւ յաղթական, բացառիկ վերընծիւղումով, իր տնտեսավարական ու գործարարութեան մարզերէն ներս հասնելով նախանձելի դիրքերու, այդ բոլորը ծառայեցնելով իր ժողովուրդին, հայրենիքին, մշակոյթին, անսահման նուիրաբերումներով ու պատրաստակամութիւններով:

Կանուխէն, տակաւին դպրոցական, ապա, համալսարանական, հուսկ ասպարեզային տարիքի շրջանին, երբ արդէն որդեգրած էր ՌԱԿ-ի գաղափարախօսութիւնը եւ անդամակցած անոր, անհունօրէն հաւատալով այդ վարդապետական ընտրանքին, Ուզունեան եղաւ բարձրացող աստղ մը եւ Վահան Թէքեանի անունով միութեան հիմնադիրներէն մէկը, ՌԱԿ-ի բացարձակ հովանաւորութեան ու շուքին տակ, ինչպէս իր, նաեւ իր միւս գաղափարակից ղեկավարներուն հետ զայն դարձնելով մշակութային միջնաբերդ մը:

Այս է պատճառը որ Ուզունեան, յետագային, իբրեւ հիմնադիրներէն մէկը համանուն ԹՄՄ-ի, իր անուամբ, սակայն միշտ ԹՄՄ-ի գերագոյն ծիրէն ներս, հիմնեց գրական մրցանակ մը, որ իր մտաւորականի հաւատամքն էր:

Հայկազէն Ուզունեան, որ կեանքի աշխատանքային բերումներով, իր շրջապատէն աշխարհագրա- կանօրէն հեռու գտնուեցաւ, բայց, ի տարբերութիւն ուրիշներու, ոչ միայն մնաց իր ժողովուրդին հետ, այլ, իւրաքանչիւր առիթով ու պահանջքով, ան միշտ ամենուր ներկայ էր, արձագանգող եւ իր ներկայութիւնը զգացնող, ՌԱԿ-ի, ՀԲԸՄ-ի եւ ԹՄՄ-ի միջոցով:

Մենք` երիտասարդներս, որոնք հեռուէն լսած էինք Ուզունեանի մասին, իր

Կեդրոնական Վարչական Ժողովի մակարդակներով, հասաւ բարձրագոյն դիրքերու, վայելելով Ազգային Բարերար Կարպիս Լ. Նազարեանի եւ մանաւանդ ցկեանս Նախագահ Ալեք Մանուկեանի ամբողջական զօրակցութիւնն ու նեցուկը:

Հայաստանի անկախացումէն ետք, Ուզունեան եղաւ այն հազուագիտներէն, որ հայրենիքի օժանդակութեան հասաւ, ոչ միայն ՌԱԿ-ԹՄՄ-ՀԲԸՄի միջոցով, այլ իր սեփական ներդրումներով, նաեւ եւրոպահայ ձեռներեց ազգայիններէ ապահովելով համապատասխան յատկացումներ եւ նպաստներ:

Այդ օրերուն, հայրենի մտաւորականութիւնը, որ կ'ապրէր ապրուստային աննախընթաց ահաւոր տագնապ մը, Ուզունեան եղաւ այն առաջիններէն, որ օգնութեան ձեռք երկարեց անոնց:

Հայկաշէն Ուզունեան, իր սերնդակից ղեկավարներուն կրտսերներէն եղաւ, որ ապրեցաւ անկախութեան գործընթացի հանգրուանային պահը, բայց միշտ մնալով յանձնառու իր գաղափարախօսութեան, որուն համար ալ, ամէն անգամ որ երիտասարդներ կը տեսներ կամ անոնց հետ ըլլալու առիթ կ'ունենար, իրեն յատուկ զսպուածութեամբ, բայց հաղորդականութեամբ, կը շեշտէր

.'Երիտասարդներու միջեւ, ոչ մէկ տարակարծութիւն չեմ ուզեր լսել':

Այս ձեւով, ան մեզի (եւ ուրիշներուն) հասկցնել կ'ուզէր, որ դուք էք ապագան, դուք էք ջահակիրը:

Այսօր որքան ցանկալի պիտի ըլլար, որ վերոյիշեալ հաստատումը դառնար կենդանի իրականութիւն մը, որովհետեւ ատիկա է շարունակականութեան գրաւականը:

